



ՀԱՅԲԱԹԱԹԵՐԹ

ԱՐՁԱՅԻՆԱԳՐԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 63

ՍԵՊՏԵՄԲԵՐ 23/5 [ՀՈԿՏԵՄԲԵՐ] 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՐ
ԶԵՆԱԿ
ՏՈՒՐՈՒ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի † Սեպտ. 22/5 Հոկտ. † Թիւ 63

ՕՐՄԱՆԵԱՆԻ „ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ“ ԳԻՐՔԸ¹

Բ.

(Շար).

Այդ ակնյայտութեան հակառակութեան և անհամարայր հակասութեան հակառակ, որով չէ կարելի երբեք ներկայ հայուն դէպի անկրօնութիւն չարժուժը՝ ազատամտութեան անուամբ՝ օղակաւորիլ անոր կենդանի և անյողողող հաւատոց ծագութիւն հետ, Պ. Bareilles այդ քանդիչ ազատամտութեան աւելի խորունկ պատճառներ մը կուզէ երեւան հանել, քաղելով այն (տեսէ՛ք քաջութիւնը) նոյն իսկ Հայոց նախկին հաւատքէն, որուն վրայ հիմնուած է կ'ըսէ այդ միտումն դէպի անհաւատութիւն (!?) : Եւ այսպէս Հայը կը հաւատայ ըսելով՝ Արդիապաշտից հաւատամքէն՝ մէկ քանի յօդուած Հայուն բոլոր կը դնէ : Այդպէս ընելու էր անշուշտ զՕրմանեան արդարացնելու համար : Կը հարցնենք ուրեմն իրեն թէ երբ Հայը կը հաւատայ կ'ըսէ զՕրմանեան, զՕրմանեան և իր դպրո՞յն . . . այդ իրաւ է, ներկայ գրքէն ալ այդ կը տեսնուի. — արդի Հայ ժողովուրդը . . . խեղճին մեծամասնութիւնը լուր չունի ըս-

¹ Տես Թիւ 61, էջ 513 :

ուածէն . ագէտ աւանդականութեամբ և աւանդական տգիտութեամբ կը քալէ ճամբու մը վրայէն զոր չի գիտեր . տորվեցնող չէ եղած . թշուառ փոքրամասնութիւն մը կ'արհամարհէ ամէն հաւատք :— Հին Հայ Եկեղեցին ըսել կ'ուզէ . հոս կը սխալի հանդիսապէս և բայէն կ'ըսենք իրեն թէ Հայ Եկեղեցւոյ վարդապետութիւնը Օրմանեանի գրքէն սորվելու չէ : Փանք հիմայ այդ հաւատալեաց . Հայը կը հաւատայ 1) թէ ո՛չ մի Եկեղեցի, ինչպիսի ալ ընդարձակ եւ կարեւոր ըլլայ՝ չի կրնար ամբողջ Քրիստոնէութիւնը ներկայացնել :— Քրիստոնէութիւնը ներկայացնելու համար թուական ամբողջութիւն կարեւոր է . բայց այդ՝ Օրմանեանի իսկ հակառակ է՝ որնոր Քրիստոնէութեան ճշմարիտ ճիւղը բաժանմանց մէջէն որոշելու համար ուրիշ նորագիւտ կանոնի մը կը հետեւի (էջ 129) . ինչպէս պիտի տեսնենք իր տեղը : Ծշմարիտ ոսկին և սուտ ոսկին իրարմէ խտրելու համար՝ քանակական առաւելութեան չի նայուիր անշուշտ . սուտի կողմանէ միլիոն ըլլայ և ճշմարիտ կողմէ մէկ , այս մէկն է ոսկին , և միլիոնը՝ ոչ : Քանակական առաւելութեան յենու ամենէն աւելի իրաւունքն Կաթողիկեայքս ունենալով՝ բնաւ անոր վրայ չենք հիմներ մեր հաւատքի ճշմարտութիւնը . թէպէտ կ'օրհնենք այդ ընդարձակութեան մէջ Աստուծոյ նախաձեռնամ տեսչութիւնը : Բոլոր մարդիկ ուրոնան զԿաթողիկէ Եկեղեցին և մէկ հոգի միայն Կաթողիկեայ մնայ , ասոր կողմը պիտի մնայ ճշմարտութիւնը : Ուստի դրուած սկզբունքով կամ այնէ որ կ'ենթադրէ Պ . Bareilles , որ ո՛չ մի ճիւղ , Քրիստոնէութեան , չի կրնար ճշմարիտ նկատուիլ . կամ թէ ճշմարիտ անոնց մէջ գտնուելով հանդերձ՝ ասիկա չի կրնար ճշմարիտ ըլլալ առանց հետն ունենալու միւս սուտ ճիւղերն : Առաջին ենթադրութիւնը կը ջնջէ Քրիստոնէութիւնը ու կը վտարէ զայն աշխարհի երեսէն հակառակ Քրիստոսի Տեառն միւրոյ անսուտ խոստման . երկրորդը՝ հակասական ու ծաղրելի է . անշուշտ չպիտի կարենայ ըսել մեր յառաջաքանողը թէ ճշմարիտ ոսկին՝ ճշմարիտ ըլլալու համար կամ որ նոյն է , զոսկէն ներկայացնելու համար հարկ է որ հետն ունենայ սուտ ոսկին : Յայտնի է ասկից թէ դրուած սկզբունքը կը մեկնի արդի չիիլիսոփայութեան այն սկզբունքէն՝ թէ ճշմարտութիւնը կարծիք է : Այս Հոլլէյի ակնաստիկութեան կը տանի , զոր Սքէնսէրի դրականութիւնը ու Քանդի ենթակայականութիւն կը բացատրեն այսպէս . «Ճանաչողութեան այլեւայլ դրութեանց արդի ֆնևադաստիքներ եզրակացունել կուտայ մեզ թէ ճանաչողութեան ասպարեզի մէջ ամեն ինչ եմբակայական եւ խորհրդանշական (Symbolique) է (ծրագիր Արդիակ .— Պատասխան Պիոս Ժ .ի կոնդակին . Հուլիս 1908 էջ 109) : Արդիականաց վարդապետութեան մերձեցումով , զոր յաճախ պիտի ընենք , որքան լաւ կ'արդարանայ անգամ մը եւս մեր հիմնական դիտողութիւնը թէ Օրմանեան ուզած է Արդիականութիւնը հայացնել կամ լաւ եւս Հայոց Եկեղեցին պատուաստել այդ անճոռնի աղանդի սկզբանց վրայ : 2) Թէ

մասնաւոր եկեղեցիներ, զսս զսս առնուած առեկն կրնան սխալիլ — նորոգող
սխալ սկզբունքին հետեւանքն է այս. ուստի անգամ մ'ալ կը հարցնենք՝
թէ այդ մասնաւոր եկեղեցիներու մէջ՝ ճշմարիտ եկեղեցի մը կ'ա՞յ թէ
ո՛չ. եթէ ո՛չ-ճշմարիտ է ուրոյն մնալով, մշկտեղ ալ գան ամենքն՝ կը մնան
ո՛չ-ճշմարիտ. իսկ եթէ կայ մէկը որ ճշմարիտ է, այն ատեն այս մէկը՝ ըն-
դարձակ ըլլայ չըլլայ՝ ճշմարիտ ըլլալուն համար՝ անսխալ է. վասն զի Այոն
Այո՛ է, և Ո՛չն ալ Ո՛չ։ Արդ այս մշակ ճշմարտին միանալով ու անոր շնորհիւ
միայն կրնան մըս մասնակի եկեղեցիներն մասնակցիլ անսխալականու-
թեան մենաշնորհին՝ ինչպէս անուի մը ճառագայթներն միակ առանցքէն
ազուցուելով է որ անոր բոլորակը կը բռնեն և անթեքելի կ'ընեն շար-
ժումէ առաջ եկած ճնշումին դէմ։ Այս կը պահանջէ ուղիղ բանականու-
թիւնը, այս կը պահանջէ Քրիստոսի Տեառն մերոյ աստուածային բա-
ցարձակ անմոլարութիւնը, որուն վրայ հիմնուած է եկեղեցւոյ ան-
խախտելի ճշմարտութիւնը։ Գիտութեանց մէջ ալ մոլար կարծիքներն
հարկաւորապէս տեղի կուտան ստուգուած ճշմարտութեան և միայն
ճշմարտին համաձայնելով է որ միութիւն կը գոյանայ անոնց մէջ և ա-
մէն տեղ և այդպէս կ'աւանդուին անոնք։ Այս պատճառաւ է որ եկե-
ղեցւոյ միացուցիչ տեսանելի կեդրոն մը կարեւոր է, ինչպէս անուին
առանցք մը, կեդրոն մը ամբողջութեան, որուն կառչին ամենքն՝ երբ
դրունք դժոխոց յարձկին, և ապա ինին՝ անոր՝ երբ սատանան ուղէ
խարբալիլ։ Ուստի Քրիստոսագիր տեսանելի կեդրոնի շուրջը անմիջա-
պէս հաւաքուած եկեղեցիէն զատ՝ միւս մասնակի եկեղեցիներն՝ առան-
ձին ու ինքնուրոյն մնալով՝ կրնան սխալիլ. և եթէ անկից բաժնուած
լլան անոր հակասելով՝ արդէն իսկ սխալած են. իսկ եթէ միմեան ա-
նոր՝ կը մասնակցին անոր անսխալականութեան։ Այս է հարազատ Հայ
եկեղեցւոյ ալ վարդապետութիւնը, ինչպէս յուսանք ցուցնել իր տեղը։

3) Թէ միայն ընդհանուր եկեղեցւոյ կը պատկանի դաւանական որոշումնե-
րու մէջ անսխալ ըլլալու առանձնաշնորհութիւնը. ասոր պատասխանն
ստուած եղանք. սակայն հոս ալ պզտիկ դիտողութիւն մը ընենք և ա-
ռաջ երթանք։ Ընդհանուր քաղաքացիի բնել չէ. քաղաքացիի իրար-
մէ զատ, անջատ իրերու քով գրուելէն կը դիզուի և հաւաքական ու
ոչ-միութենական ամբողջութիւն մը կը կազմեն, որ միութիւն չէ, այլ
մերձադրութիւն մը (juxtaposition)։ Միութեան համար չաղկապող զօդ
մը կարեւոր է։ Իսկ ընդհանուր կ'ըսուի մեկ, միակ իր մը որ չատերուն
կը պատկանի նոյն ու հաւասար առնչութեամբ. և այդ միութիւնն,
որ նոյն ու հաւասար առնչութեամբ կը բաշխուի՝ ճշմարտին յատ-
կութիւնն է։ Հետեւաբար ճշմարիտ եկեղեցին իր միութեամբը նո-
վին գործով ընդհանուր է և այդ իմաստով իրաւ է թէ միայն ընդհա-
նուր եկեղեցւոյ կը պատկանի անսխալ ըլլալու առանձնաշնորհութիւնը. վասն
զի Քրիստոս Աստուած՝ միայն ճշմարիտ եկեղեցւոյ խոստոցաւ թէ հետն


պիտի մնայր ցկատարած աշխարհի և թէ պիտի չնորէր անոր Հոգւոյն Սրբոյ հսկող հովանաւորութիւնը: Եկեղեցւոյ և մանաւանդ անսխալա- կանութեան վրայ խօսողն պէտք է որ այս սկզբունքներն ընդունի: Իրարու հակասող եկեղեցիներ. այդպէս անջատ ու անհաշտ մնալով՝ չեն կրնար միակ եկեղեցի կազմել՝ նոյն իսկ եթէ պատահարաւ բանակցու- թեան մը գան, և միութիւն չկազմելով՝ ընդհանրականութիւն ալ չեն ունենար, մնալով ընդհանրականութիւնը միայն ճշմարտին սեպակա- նութիւնը: 4) Նա կը հաւատայ եւս, որ երե դաւանութիւնները անփոփոխ պէտք է մնան, որովհետեւ անոնք են ներկայն իւր ծագումին հետ կապող թելերը. սակայն միւս կողմէն պէտք է դիտութիւններ ընծաւել պարզ վար- դասպետական կէտերու նկատմամբ: Դաւանութիւնները անփոփոխ մնալու են. ինչո՞ւ համար յոգնակի. որովհետեւ միշտ այն ենթադրութեան մէջ է թէ Քրիստոնէութեան ամբողջութիւնը զանգուած ըլլալու է ոչ հա- մակարծիք. միահաւատ անդամներէ, այլ այն ամէն հակասող ու զի- րար ստող յարանուանութիւններէ, որոնք բնականաբար իրարմէ բաժ- նուած, անջատուած դաւանութիւններ են և չեն կրնար Քրիստոսի վարդապետութիւնն ներկայացնել, որովհետեւ Քրիստոս ինքնիրեն չի կրնար հակասած ըլլալ: Այս սկզբունքով յայտնի է թէ աւելորդ է խօ- սիլ Եկեղեցւոյ վրայ, յորում կորսուած նկատելու է ճշմարտութիւնը կարծիքներու խճողեալ անտառին մէջ և շատ շատ ուղիղ քննադա- տութեամբ և հիմնեալ ուսմունքով իյնալու է այդ անտառի մացառի մէջ փնտռելու համար ճշմարտութեան կորսուած մարգարիտն: Չուզել այս մարգարիտն որոշել և ուզիլ ընդհակառակն որ նա ծածկուած մնայ և կենան սոքի վրայ. զայն աչքէ հեռացնող հակասութիւններն, խտրութիւններն, բաժանումներն, դարուս խելագարումներէն մին է, հետեւանք այն փիլիսոփայութեան որ սուան ու սխալն արդարացնելու համար ստեղծուած է: Բայց մեր յառաջաբանողն ալ այդ ընդդիմահար դաւանութեանց մնալն յիշուած փիլիսոփայութեան պահանջովն չէ որ կարեւոր նկատէ. վասն զի անոնք անփոփոխ մնալու են կ'ըսէ, ո'չ թէ Քրիստոսի ըլլալնուն համար և ո'չ որովհետեւ ճշմարիտ են, այլ որով- հետեւ անոնք են ներկայն իւր ծագումին հետ կապող թելերը: Նախ՝ չենք ընդունիր որ էջմիածնական և միւս բոլոր հերձեալ եկեղեցեաց ծագու- մին կը համաձայնին այժեան բաժանիչ ու բաժանեալ և կաթողիկէ ճըշ- մարտութեան հակասող դաւանութիւններն. նորէն կը կրկնենք «ի սկզբ- քանի ոչ եղիւ այնպէս». մէկ դաւանութիւն կար լեզուներու և ազգաց տարբերութիւններն մնալով հանդերձ. ժամանակը չէ հոս աւազոյցնե- րու իջնել, սակայն յիշենք Ս. Իգնատիոսի Անտիոքացւոյն խօսքը (+107) զոր նախնի Քրիստոնէից կը գրէ, կրնայ այժմէն խրատ մը ըլ- լալ հետողներու. «Դուք կ'ըսէ 'Ի ՆՈՅՆ ՀԱՌԱՏՍ ԵՒ 'Ի ՆՈՅՆ ՅԻ- ՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ... ամենիդ ալ Ի ՄԻՈՒԹԻՒՆ եկած եք յախանէ յան-

ուսնի (այսինքն առանձին առանձին) որպէս զի հնազանդիք եպիսկոպոսին եւ ֆանաւայարանին ԱՆՊԱՌԱԿՏԵԼԻ ՄՏՕԲ, քեկաներով ՄԻՆԻՆՈՅՆ ՀԱՅԸ, որ անհաւոքեան դեղն է» (Թղթ. առ Եփես. Mg. 5. 661)։ Այս և ասոր նման բայայայտ վկայութիւններ չառ պիտի տեսնենք թէ Տէրը կամենայ, իր ժամանակին։ Կիմակոյ ընէ սակայն թո՛ղ զգուշանայ Պ. Barcilles, ներկայ անորակելի և ցաւալի հերքումներն առաջին դարերու ծնունդ չնկատել և ո՛չ վերագրել (սրբապղծութիւն կ'ըլլար այդ) Բրիստոսի Տեառն մերոյ, որ ուզած էր որ Բրիստոնեայք մի ըլլային ինչպէս ինքն և իւր Հայրը մի են։ — Եթէ ներկայն իւր ծագումին կապող թել մը կը փնտռէ Էջմիածնական Հայը, գուցէ աւելի պատմական ըլլայ հեքսանուորիւնը, կոսպացոյքիւնը... Արդէն ոմանք այն դարերը կը վերագոյնեն... արդէն դպրոցներու մէջէն կը վտարուի Աստուած և ըստած է տեղ տեղ «հերիք է Հրեիկն ծառայենք» (անհաւատալի՜ հայհոյանք)։ սա արդէն աւելորդապաշտութիւնը, տգիտութիւնը և մոլորամիտ յամառութիւնը՝ անուանական Բրիստոնէութեան մը վերածեր է խեղճ Էջմիածնականութիւնը... արդէն իրենց հաւատքը չի ճանչցող կղեր մը, հաւատքի ուսման ըստրովին անտեղեակ՝ կարող չէ ազատամտութեան, անկրօնութեան և գիտութեան անուամբ ստեղծուած կրօնամարտ դրութեանց դէմ դնել, անոր համար ալ նա դժուարութեանց մէջէն չելլելով և չուզելով դիմել՝ ուր կրնար գտնել այդ ամենուն ճակատելու ամէն միջոց՝ տեղի տուած է բողոքական սկզբունքին թէ կրնայ թոյլ տրուիլ ազգին մէջ այն ամէն դաւանութիւն որ իւրաքանչիւր անհատ իր քմահաճոյից կը թողու։ ուստի Հայն իր ծագումին, անհաւատութեան գիրկը տանող ճամբան չսկսած է, յետին հարուած մը կը մնայ որ վերջնականապէս աշխարհականացնէ ամէն բան... զառիթափը հոն կը գահավիթէ և եթէ Աստուած թոյլ տայ այդ անկումն ի պատիժ... չուշանար կը հասնի ազգը փոսին յատակը... — Դաւանութեանց անփոփոխելիութիւնը, որքան ալ տրուած իմաստով արգիւտաշտից սկզբունքներուն չի հակասիր, ու մանաւանդ անոնց պահանջն է, սակայն անփոփոխելիութիւնն ըստը անսխալականութեան հոտ մը կուտայ, որ անախորժելի է արգիւտչունք թերու։ հետեւաբար Օրմանեանի ջատագովը պարզ փարպաքսական կեանքով՝ նկատմամբ դիւրութիւններ կը պահանջէ։ կ'ուզէ այսինքն որ անոնք ըստ քմաց փոփոխուին։ Պարզ փարպաքսական կեանք ըսելով՝ չենք գիտեր՝ ինչ ըսել կ'ուզէ։ Եթէ բողոքականաց առաքնական ու երկրորդական հաւատալեաց զանազանութեան կ'ակնարկէ, սխալ է այդ։ որովհետեւ ինչ որ աստուածային յայտնութեան զօրութեամբ հաւատալիք է՝ երկրորդական չի կրնար ըլլալ։ այն աստուածային ճշմարտութեան վրայ հիմնուլ է և արժանի է որ ամբողջովին հաւատացուի, միշտ և անկեղծաբար մտօք։ Եթէ լոկ աստուածաբանական կարծիք կ'ուզէ ըսել, լաւ գիտնալու է թէ այդ կարծ-

եայ մէջ ո՛չ միայն դիւրութիւն տալու է , այլ հարկ է կարծիք պահել
և հաւատալեաց հետ չչփոխել . կարծիքներն փոփոխուելու ենթակայ են ,
բայց ո՛չ այնպէս՝ ստոյգ ու հաստատուած և վճռուած հրամանակարգ
վարդապետութիւններն . որոնք Քրիստոսաւանդ հաւատքի ամբողջու-
թեան կը վերաբերին : 5) Պարզ վարդապետութիւնը ժամանակի ընթացու-
մին արտայայտութիւնն է եւ հետեւաբար փոփոխուելու աչ ենթակայ է — Հոս
սահման մը կուտայ պարզ վարդապետութեան , զոր սակայն չի սահմա-
նէր . վարդապետութիւնը լոկ ըմբռնում մը չէ . եթէ փոփոխելի և անձ-
նական տեսութեան կ'ակնարկուի՝ սա կարծիքական ըմբռնում մի է և
վարդապետութիւն չըսուիր : Ժամանակը բմբռնելու եղանակը կամ մի-
տումը , զոր մտայնութիւն ալ կ'անուանեն նոր բառով . երբ ճշմար-
տութեան մը շուրջը ստոյգ համաձայնութեան մը հասնի . կը դադրի
մտայնութիւն ըլլալէ : Միտքը , մանաւանդ երբ մշակուած չըլլայ , ճա-
շակի , քմահաճոյից կրնայ խաղալիք ըլլալ՝ բայց ճշմարտութենէ դուրս՝
և ո՛չ ճշմարտութեան մէջ . զոր երբ ստանայ՝ կը հաստատուի . ըսել է
թէ այդ պարզ վարդապետութիւնը ըսելով կարծիքական բայատրութիւն
մը կը հասկնայ , և սա մենք ալ կ'ընդունինք թէ փոփոխուելու ենթա-
կայ է . բայց հաւատալեաց կարգ անցած այդ տեսակ պարզ վարդա-
պետութիւն չկայ : — 6) Պիտի կարծուէր թէ փոփոխելութիւնը վար-
դապետութեան միայն պարզ դասակարգին պահէր . բայց արդիապաշար
մտնալով գուցէ ինչ առաջ քարոզած դաստնութեանց անփոփոխ մնալու
պէտքը . ընդհանուր օրէնք մը կը նետէ մէջտեղ . «ո՛չ մի բան փոփոխա-
կանութեան օրէնքն ազատ չի» . Ինչպէս , բնական օրէնքի սկզբունքներն
ալ . ֆիզիքական օրէնքներն ալ . այն ատեն գիտութիւն չկայ և կ'իշ-
նանք չին Փիլըրոնեան սկեպտիկութեան մէջ և ըստ այնմ ճշմարտու-
թիւն բուռածն ալ անխառն բառ մը նկատուելու է կամ դասողութեան
չոռութիւնը ինչպէս կ'ըսէր այն դպրոցը : Եւ այս դրութիւնն է՝ արդի
բնապաշտութեան սկզբունքով ենթակայն ու Եան ամէն ճանաչողու-
թեանց ու ճանաչելեաց կեդրոն նկատելով՝ նոր-քանախական քննադա-
տութեան հիմն է : Նոյն հիման վրայ Արդիապաշարի Ակնոսդիկութիւնն ,
որ բնութեւութիւն (phenomène) ծանօթութիւնը լոկ ենթակայական ստա-
ւորութեանց վերածելով՝ կը համարի անծանօթ ու անճանաչելի իրաց
բնութիւնը (Noumène) . կը ներկայացնէ խելձ մարդկային միտքին
բութ ու կոյր , որ կ'ընայի և չի տեսներ . եկած է արդեօք մար-
դարէներէ սպառնացուած այն ժամանակը , յորում մարդիկ պի-
տի լսեն ու չպիտի իմանան . պիտի հայլն ու չպիտի տեսնեն :
Ափսոս գիտութեան ու զարգացումը խոչոր բառերու , որ կը գործած-
ուին ու կը կրկնուին այնքան աղմկով՝ բանականութեան այս տեսակ
դաւաճաններէ : Անշուշտ թէ եկած չէ , կրնայ գալ այսպիսեաց երեսն
Աստուծոյ ամենամեծ պատիժը՝ աղգովին լքումը , որով թոյլ կուտայ

ամբողջ ժողովրդեան մը սրտին թանձրացումը, որով ականջնին ծանր պիտի լսէ ճշմարտութիւնը և անոր դէմ աչքերնին պիտի գոցեն՝ կամովին չտեսնելու համար և չլսելու համար ականջով, որով և սրտերնին ալ պիտի մնայ անզգայ և դարձի չպիտի կարենան գալ որ կարենային գուցէ հանդիպիլ Աստուծոյ բժշկիչ ու փրկարար սղորմութեան։ Ահաւոր պատիժ որուն դէմ կ'երթայ Հայ ազգը։— 7) Մեր այս մտահոգիչ և արդարացի յոռետեսութեան հակառակ մեր յառաջաբանողը «սխալած ըլլալ չեմ կարծեր (կ'ըսէ համեստօրէն) քե ամեն զարգացումի սերմերը այդ սկզբունքի մէջ կը պարունակուին։ — Զարգացումը շարունակ փոփոխելութեան, յեղաշրջման մէջ գնել սխալ է. տեսակ մը շարժումի մէջ գնել կարելի է. — բացատրեմ. Ֆիզիքական գիտութիւնները և նոյն իսկ արհեստները՝ կրնային զարգանալ՝ եթէ միշտ գլխէն սկսելու հարկ ըլլալ և յեղաշրջելու հիմնովին. յայտնապէս ո՛չ. անոնց մէջ ստույգ և որոշ մասը անփոփոխ կը մնայ, կ'անցնի ժառանգներու։ Ենթադրական, կարծիքական մասը կը յեղաշրջուի՝ մինչև որ ստուգութեան հասնի. հոն գալէն վերջ՝ այն ալ կը մնայ անշարժական։ Նոյնն է հաւատալեաց մէջ՝ երբ վարդապետական կէտ մը ստուգապէս Քրիստոսի վարդապետութիւն կը յայտարարուի՝ անփոփոխելի վարդապետութիւն մ'է, կարծիքական մասը վէճի նիւթ է. սակայն սխալը չի կրնար երբեք զճշմարտութիւնը ստուգութեան վիճակէ կարծիքականի տանիլ։ Արդիապաշտից (transfiguration) փոխակերպումն և (oléfiguration) այլակերպումն՝ գիտական օրէնք մը չէ և չի կրնար իրականութիւնը խախտել եթէ չուզուի գիտութիւնն անուանել քմահաճ ենթակայապաշտութիւնը, որով ենթակայն, Եսը, անհատը կ'ըլլայ ճշմարտութեան կշիռ, կեդրոն ու պատճառ։ Այս պարագային սակայն խօսելով Քրիստոնէական վարդապետութեան ու հաւատքի վրայ՝ Քրիստոսի աւել կը դրուի Եսը, որով անշուշտ Քրիստոնէութենէ դուրս բան մ'է քարոզուածն ու հաւատացուածն։ Քրիստոսի Տեառն մերոյ վարդապետութեան մէկ նշանախեցն ալ կը մնայ և պիտի մնայ անփոփոխելի՝ նոյն իսկ եթէ երկինք ու երկիր անցնելու ըլլան։

(Շարունակելի)



ՓՐԱՆՄԱՍՈՒՆԸՎ ՎԷ ԹԻՒՐԲԻԱ ԻՇԼԷՐԻ

(Տե՛վա՛մ վե խիթա՛մ)

Ժ հօն Թիւրք մասուն գօլթիքսիմին խթիպսաւ պիտ ասի խոլ ամեկ (reaction) ինքա՛ն եսիյօր։ — Թիւրք ֆրանսիսաւնչարք միյեքթիքվիք խթամիյեք քարաֆընը իղիզա՛մ եքմեք կեօսքեթիյօրչար։

Ճավրիս պէյին Շարգտա պէօյլւմիւն մէնֆաթփէրէսի էփրօքսալլա-
րա օլտն միւնասէպաթը, կէրէք քէնանին վէ կէրէքսէ տիկէր «գարն-
տաչլարին» պիղզաթ քէնաի աիւլէրի էփրօտրնա վազր օլտն մէմուրի-
յէթէ կէչիրմէք վէ սոյրէ կիպի հալլէրի, ֆրանմասօն ժէօն Թիւրքլէրին
մէղհէպսիլլիք թաւրը թաղընմալարր, պուրտրն քեով ֆէսի Թիւրք է-
հալլաի վէ որտու որտաընտա կիթաիքճէ արթան վէ պէօյլւնէն պիր հա-
րէքէթէ մէյսան վէրտի, պու հարաքէթին պաչրնա, սահիպի նուֆուզ
միրալայ Սատրգ պէյ կէչաի, վէ պուլնըն նէթիճլաի օլարագ Ճավրիս պէյ
սիւլաիւ:

Պուլնըն իւզէրինէ, գօթիթէ, լօժլար, սոնա Մուսէվի գալմըշ օլտն
Եահուտիլէր վէ աէօնմէլէր տէնէթէ կիրփիթար օլարագ, խաթիթ հա-
րաքէթլէրինի քեամըլէն թէպտիլ էթաիլէր. քէնաի մասօն ֆիքրլէրինի
ալէնէն իզնար էյլէմէտիքաէն մասա, պիլ աքիս, զահիրէն կէօզէ չարփա-
ճագ սուրէթտէ մէղհէպի հիսաիթլարա մալիքիէթ սիւսիւ թագրնար-
լար վէ բանիսլամիսթ վէ չէտիս միլլէթիքլէրլիք ֆիքրլէրինէ միւրա-
ճաաթ էթաիլէր:

Պու սոպիգատան իթիպարէն, գօթիթէն օրկանը օլտն «ժէօն
Թիւրք» Թիւրքիանըն զարօյ միլլէթլէրինաէն հէր հանկ որ իլէ օլուրա
օլտն, պիր մէսէլէսի զուհուր էթաիլինաէ. էն գաթի պիր իթիլաֆ գա-
սուլ էթմէքսիլլիք (intran: igeance) վազ էթմէյէ պաչլատար Հսիթա Իս-
լամիլէթէ գարչր իտիլէթեար պուլուլնան Ինկիլիկէրրա պիլէ քէնաի Մը-
սրր մէսէլէսի իչիւն պու թարզ մուհաճէմօթտան մասուն գալմասը:

Մուհարրիբի մէգալէ աւյօր քի. Սր վ. վիլքօքս թարաֆընտան
իլթիլամ էտիլէն Շաթիթն իսպտար իչլէրինաէ պիր որա մուհիմմ պիր
վազիֆէ իչլալ էյլէմիշ օլտն Սանթօ Մէմօ նամընտաքի Եահուտիլին
Սթանպօլտա, Սէլանիքտէ վէ սոիր մահալլէրաէ վէրտիլի գօնֆէրանսլա-
րըն սաիի պու ֆիքրէ պինաէն օլտուլընա հիւքմ էտիլէ պիլիլ: Թիւր-
քիանըն ըէսմի թէլէկրաֆ աժանար օլտն «Աժանա Օթթօման»ըն պաչըն-
տա Պալատալը Սալիհ Կիրփի իսմինաէ պիր մասօն Եէնուտի պուլուլն-
մագտա օլուպ պու սաիի աչիի մագսէպէ վէ աչիի հիւանի հիլէթին ֆիգ-
տանըլէ, Ինկիլիզ թէչէպպիւս. թլնա վէ պոխուսուս Պրաթ վէ Տիճլէ
նէչրլէրինաէ Մ. Լինչ թարաֆընտան վուպու պուլուն թէչէպպիւսլէրէ
գարչր չըզպրլար: «Եէնուտի ֆրանմասօնլար վէ Թիւրքլէրիմէ» իւնվա-
նը ալթընտա ետպրմըշ օլտն մէչնուր մէգալէնին մուհարրիբի նալլ էտի-
յօր քի, եագրնլարտա Սիւրիստա պուլուլնալը վազըթ ժէօն Թիւրք
ֆրանմասօնլարըն օրալարտա պէօյլի ք պիր ֆաալիլէթ կէօթէրմէյաէ օլ-
տաղլարընը, օ նէվալիտէ պէօյլի ք պիր ալթիւսթիլէք հուսուլա կէթիլմէյէ
մուվաֆֆագ օլտուզլարընը, վէ ճէպէլի Լիպնան գրիթար Օսմանլը իմ-
փէրաթօրըրընըն ալսամը միլլէմմիմէսինաէն օլարը պէնանէսլլէ,
«ֆրանմասօնճա» օ էյալէթին սաիի Օսմանլը կրանք օրխանը կրան մէրի

պուլունան տախիլիյէ նազըրրնա թապի օլմասը իշիւն ձէպէլի Լիպնանա տա էլ ուղտառնազլարընը անլամըշ տըր: Քէլալիք թիւքք ֆրանմասն-լըլընըն Սըսրրաա տա պէօյիւք ֆաալիյէթլէ վէ պէօյիւք պիր մահրէմի-յէթ տախիլէսինտէ չալըշըյօր օլտուղընա տա վազլի օլմուշ ալր:

«1908 Ինգիլապընըն ֆէրտասընտա, ժէօն թիւքքլէր թարաֆընտան Ինիլիթէրրա բարլամանթէր ըէժիմինին հայրէթզէտէլէրի օլալ գլարընը իգ-րասը էտէնլէրին թէլէմինաթըր գաւլիյէլէրի, Ահմէտ Ռիզանըն վէ ըէֆիգլէ-րինին Ինիլիթէրրա լէ՛ննտէ իրատ էլէտիքլէրի նութզլար, ինգիլապտան ալ սօնրա Սթանպօլ սէֆիր թաեին օլունան Սըր Ճ. Ա. Լաութըրա կէսաթէրիւն թէվէճճիւհքեար իսթիգպալ վէ գապուլ նիւմայիլէրի տէր խաթիր էաթլէճէք օլուրաա, պու թէպալիլ մէսլէքաէքի զարապէթի կէօր-մէքաէն ինտան քէնտինի ալամայօր:

Նեթիմէ:— Յրսննասօնըրգ հեք եհրհե օլտուղը կիսի թիւրքիսաա սախի միլլի հարապիյեթին վէ մանլըն ամիլի Տիր:

Սահրապի մէգալէ չու իպարէլէրլէ սէօյիւնէ իսթամ վէրիր:

Սըրֆ քէնաի մէնաֆիլի գաթիյէլէրինի թէմին, վէ «պուզղ ու աաա-վէթլէրինի թէչպի՛ էթմէք մազստարլա մէչղուլ պուլունարագ, «ֆրան-մասն գարաալըլը» իգթիգսպընճա զաթէն էլատ էթմիշ զանն էթտիյլէ-րի էվրօթա լօթլարընըն մուալէնէթինէ աճաղճապընա կիւվէնէրէք, Սթանպօլ վէ Սէլանիք ֆրանմասնլարը քէնտիլէրին ֆրանմասնըրգա կիրմէսինէ տէլալէթ էթմիշ օլան իթալիան «գարաալըլը» թարաֆընտան տա իզֆալ օլունարագ, թարապուլուսըն միւտաֆաաալ իշիւն, էն ճիւզի օլ-սուն, պիր թէստապիրի ինթիյաթլէսարանէտէ պիլէ պուլունամարլըլարար: Պու կիւն իթալիա սիւհլարլընա գարչը չըգան շէտիտ մուգալէմէթ Ա-րապլարըն իշի տիր գօմիթէնին պունաա հիշ պիր տէխլի հօգ տըր, մա-մաֆիհ գօմիթէ, Օսմանլը իմիւրաթիթըլընըն հուգուլընը քէմալը ճիւ-տիյէթ վէ շիտաէթլէ միւտաֆաաա էտիյօր կիսի կէօրիւնմէք չարթըլա Ա-րապ մուգալէ մէթինին թէսիլինի իգթիթաֆ էլլէյօր: Պիզ իսէ պու կիւն շէօյլէ զարիպ պիր հալ կէօրիւյօրըք քի ումումիյէթլէ Եէհուտիլէրաւն վէ տէօնմէլէրաւն միւթէլէքթիլ օլան լօթլար, հէր տիւրլիւ մէզհէպ ֆիքրինէ տիւլմէն օլտուլարըր հալատ, Սուլթան Սիւլէյմանըն վէ Սուլթան Մու-րատըն պօյրապլարընը սալլայօրլար, վէ ծնլարըն խալէֆի պու կիւն քէն-տի էլլէրինտէ պիր զաիֆ ալէթ իքէն, Իսլամլարը Իսլամիյէթին վէ Սա-հըն շէրէֆինին միւտաֆաաալ իշիւն սիւհաա տալէթ էտիյօրլար: Գօ-միթէնին քէյֆի մանօլլարլարը սայէսինտէ իթթիհաա վէ Թէրազղը ճէմիյէթի սօն ինթիխապլարտա ֆէվզ էլ աաէ պիր էքսէրիյէթ գազանմըշ իտի. Փուգար պու ճա անըն սուգուրունա մանի օլնանըշ Տիր: Թիւքքիա մասնլարըր ալտանտըլար. իհտաալարընա, վիւճուտ պուլմալարընա լիւ-զոււմ կէօթէրէն մէսլէլէյի պաշա չիգարապտան սօնրա, հիշ պիր իշէ եա-րամայան ալէթլէր կիսի պիր թարաֆա աթըլաճագ տըրլար: Վէ իթա-

լիա-թիւրքիա մուշարէպէտի պիթալիյի կիւն մասքէ երւոյն աշտը ալը-
նաճաղ, վէ կէրէք իսլամ կէրէք գաթօլիք մէմլէքէթլէրաէ ֆրանմասօնլըրն
էր եւ կէճ, մուլթաքա վաթանը խարօպ վէ ինդլլալա մաճքիւմ էտէր
օլտուլը անլաշլլաճաղ տըր ։»

ԽԻԹԱՄ

ՎԻԵՆՆԱՅԻ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Համաժողովոյ նախաճառքին

(Շար.)

Վիեննայի Կարդինալ-Արքեպիսկոպոսէն վերջ խօսք առնելով նոյն-
ինքն Բաղաքապետը [bourgmestre] հետեւեալ ուղերձը կարդաց Առա-
քելական Պատուիրակ Կարդ. Վան Ռոսսուֆի հասցէին .

Վսեմաւոյժ Տէր

Սոյն Կայսերական եւ Արքայական Մայրաքաղաքին բնակչութիւնը ցնձազին հոս
դիմած է մասնացանկու համար իր մեծարանքներ Ձեր Վսեմաւոյժ Տէրութեան՝ ներկա-
յացուցչին Սրբազան Հօր, ուսի, եւ ալ քաղաքին Շահապը, խոնարհաբար բարի գա-
լուս կը մաղթեմ Ձեր Վսեմութեան :

Ինչպէս քաղաքին զինանշանին մէջ կ'ը դրոշմուած խաչը, այսպէս ալ Վիեննայի
բնակիչներու սրին մէջ խորապէս քանդակուած է մեր հայրերէն ժառանգած հաւատք
եւ սէր մարդկային Փրկչին : Եւ ինչպէս զինանշանին կարմիր մակերեսին վրայ ցցուն
խաչը մասնացոյց կ'ընէ մեզի Կոստայի մարտը, այնպէս ալ Վիեննացիներու հաւատքը
նշանաւ փորձուած է դժբախտ օրերու մէջ՝ որքան մխիթարական եւ ուրախ օրերու մէջ :

Եւ այժմ ահա մխիթարութեան եւ ուրախութեան օրեր են որ կ'սկսին Վիեննայի
համար Ձեր Վսեմութեան գալստեամբ, ինչու որ անոնք կը զուգադիպին Քրիստոնէու-
թեան հաւատքի մէկ սոնալմութեանը, որու համար հրաիրուած են աշխարհի ամէն
ծայրերէն հաւատացեալներ : Սակայն, այս պահուն երբ սուրբ խանդով մը հրահրած են
բոլոր սիրտերն ալ, ի դէպ է յիշել այն անցեալ ժամանակները՝ որոնք նմեցին Քրիստո-
նէութեան վրայ :

Ճիշդ այն կէտին մէջ ուր այժմ մենք կը գտնուինք, եւ ուր բարի գալուստ կը մաղ-
թէ Ձեր Վսեմութեան Վիեննայի քաղաքը, ասկէ 400 տարի առաջ կ'եղար այն կոիւր՝
ուսկից կախում պիտի ունենար Եւրոպայի նախագահը, եւ անոր՝ Քրիստոնէութեան
յառած մնալը : Արդ, Աստուծոյ օգնութեամբ, Կարինսեան Դրան առջեւ կատարելապէս
պարտութեան մատուցաւ զայն վստա Քրիստոնէութեան յիշխման քննադատին, վնասական հա-
կատարարի մը մէջ, ու Քրիստոնէական քաղաքակրթութիւնը վերականգնաւ անկանգնելի
կործանումէն :

Այսպէս իրար կը յաջորդեն փոփոխակի՝ աշխարհի մէջ խաղաղութիւնն ու պա-
սեռազմը, հանդիման ու վիճար, բայց անգամ կը մնայ անսուսական ամենակար զօրու-
թիւնը, ու մարդկային սրտին մէջ ալ սէրը՝ որ ամէն բանի կը յաղթէ :

Մեր սրտերն ալ անա, այդ սիրով բաբախուն, մեր կեանքն ու մեր բոլոր աշխատութիւնները կ'ուղղենք՝ որպէս զի Բրիտանական հիմերու վրայ կառուցանենք մեր ժողովուրդին բնկերական ձեռնարկները. որպէս զի դպրացներու մէջ Բրիտանական օրհնութիւնները բաշխենք մեր մանկիկներուն, մարգելով զանոնք այն բարձր գաղափարներով որոնք յուսաւու չափ մ'ըլլան իրենց կեանքի երջանին մէջ՝ գաղափարներ՝ որոնք համառօտած են սա խօսքերուն մէջ. Ասուած, Կայսր, Հայրենիք:

Այս միեւնոյն սիրով տոգորուն՝ յարգալից կ'ողջունենք նաեւ այսօր Սրբազան Հայրը, ու ցնծագին կ'ընդունինք Ձեր Վսեմութիւնը մեր պարիսպներուն մէջ: Կր մայրենք որ երջանիկ ըլլան Ձեր Վսեմութեան անցնելիք օրերը Վիեննայի մէջ, հիւ անոր յիշատակն ալ Բանդակում մնայ անցնելիքին Ձեր Վսեմութեան սրտին մէջ:

Վիեննայի Կարդինալ-Արքեպիսկոպոսը իր ճառը մաս մը լատիներէն, մաս մըն ալ գերմաներէն լեզուաւ արտասանած ըլլալով, առաքելական Պատուիրակն ալ նախ լատիներէն լեզուաւ հետեւեալ կ'ըրպիւ պատասխանեց:

«Ձեր Վսեմաւում եւ Մեծայարգ Տիրոջ ինձ ուղղած սրտաբուղի գեղեցիկ խօսքերը խորապէս կը յուզեն զիս, ինչու որ, սուգիւ տնոնք փայլուն ապացոյց մ'են Ձեր Վսեմաւում տեսնելու հոգւոյն այն կենդանի հաւատքին՝ որ կը մեծարէ Փոխանորդը Յիսուսի Բրիտանի մեր Տիրոջ՝ յանձին Գերագոյն Քահանայապետին Պիոս Ժ.ի, ու կը պատուէ յիս՝ Նորին բարձր Տէրութեան ծառան: Ցնծալից հեզով անբաւ շնորհակալութիւններ կը վերցնեմք մ'Բարձեալ Ասուծոյ՝ որ Ձեր Վսեմաւում Տէրութեան հոգեկան այս ազնիւ զգացումները, Վիեննայի ամբողջ կղերին ու ժողովուրդին ալ զգացումներ են:»

Յետոյ Կարդինալ-Պատուիրակը խօսքը գերմաներէն լեզուով ուղղելով կը շարունակէ.

«Վսեմաւում Տէր.

«Երբ Ձեր ինձի ուղղած ջերմ խօսքերուն համար իմ սրտաբուլի շնորհակալութիւններս կ'արտայայտեն, չեմ կրնար միեւնոյն ասեմ ծածկել իմ զգացած բոլոր հանոյսն եւ սրտի յուսումն, ինչու որ Ձեր այս խանդավառ ընդունելութիւնը յառաջ կուգայ մանաւանդ, հաւատքի խոր զգացումէ մը: Վիեննայի բնակչութիւնը կ'ողջունէ յիս իբր ներկայացուցիչը մեր նազդողութեան Փրկչին Բրիտանի երկրի վրայ եղող Փոխանորդին: Ձեր Վսեմաւում Տէրութիւնն ալ զիս կ'ողջունէ յանուն յարգելի կղերին ու բոլոր հաւատացեալ ժողովուրդին: Երջանիկ եմ որ ես ալ պիտի կարենամ փոխանակել սոյն ոգջայնը Սրբազան Հօր օրհնութեամբ: Ուստի, անոնց ամենուն եւս կը բերեմ մեր յոյժ սիրեցեալ Սրբազան Հօր Պիոս Ժ.ի օրհնութիւնը: Նոյն օրհնութիւնը կը բերեմ նաեւ իրենց պատգանքի Վեհապետին, Նորին Կայսերական եւ Առաքելական Վեհափառութեան, Կայսեր ու թագաւորին, եւ բոլոր Կայսերական Տան:

«Նոյն օրհնութիւնը կը բերեմ եւ Ձեր Վսեմութեան՝ Սրբազան Հօր անձկալի որդեկին, յարգելի կղերին, Վիեննայի սիրելի ժողովուրդին ու բոլոր միապետութեան բնակիչներուն:

«Ծայր աւսիման յուզուած եմ մանաւանդ, երբ տեսայ թէ Ձեր Վսեմութիւնը եղբայրակցութիւն մը կը վերագրէ ինձի Վիեննայի սուրբին՝ Կղեմէս Հռոմէական հետ՝ որ Բրիտանական կենաց վերակենդանացնողը. եղաւ հոս: Ձեմ կրնար ճշգրիտ բացատրութիւն մը գտնել իմ երախտագիտական զգացումներս արտայայտելու համար Բարձրելոյն. այն մտնով որ Սուրբ Կղեմէսի հոգին նոյնքան շնորհակալ կ'ողջուրէ նոյնին ու Վիեննայի Արքեպիսկոպոսական թեմին կղերը միանգամայն:»

Կարդինալ Վան Ռոսսոմ, Առաքելական Պատուիրակը յետոյ Պրկմէսդրի [Քաղաքապետին] ուղղելով խօսքը՝ ըսաւ .

«Դուք եւս, Տէր Քաղաքապետ, հանեցէք ընդունիլ իմ շնորհակալու զգացումներս այս շեղ ցոյցերուն եւ ա՛յնքան պատուաւոր ընդունելութեան փոխան:

«Կատարելապէս իրաւունք ունիք երբ կ'ըսէք թէ այս ամէնը արդիւնք են Վիեննայի ժողովուրդին արժին ու զգացման մէջ խորապէս քանդակուած հաւատքին՝ զոր իրենց հայրերէն ժառանգեցին:

«Եւ թէպէտ ես ձեզ ամենուր համար ոչ անծանօթ մ'եմ՝ սակայն այնչափ խանդավառութեամբ կ'ընդունիք զիս, ինչու որ դուք յիս կրնաք Պատուիրակը՝ երկրի վրայ մեր Տիեզ Յիսուսի Քրիստոսի Փոխանորդ եղող Քանանայապետին: Եւ դուք իրաւամբ խոսիս կ'զգաք ինքզինքնիդ այս բանէն:

«Այս հիանալի քաղաքը սուրբի պատուարը եղած է Քրիստոնէութեան, ինչ որ կ'ապացուցուի նաեւ սա իրողութիւնէն թէ Վիեննայէ ծագած է շարումակ խաչի փառքն ու յաղթանակը:

«Ուսի, բուն հաճոյք մը կ'զգամ, Տէր Քաղաքապետ, զիս շնորհաւորելուդ համար այս հռչակաւոր տեղւոյն մէջ յանուն զուական այն դիւցազներուն՝ որոնց քրիստոնէական քաջամտութեան ա՛յնքան կր պարտի Քրիստոնէութիւնը:

«Եւ ինչ որ ամէն բանէ աւելի ուրախացուցաւ, որու արտօյն շնորհակալութիւններ կր մատուցանեմ Տիեզ, այն գեղեցիկ լուրն է զոր դուք անձամբ տուիք ինձի, ըսելով թէ ի՛նչպիսի եռանդեամբ ու ջանքով կր սփիւրջաւ համար ժողովուրդին եւ ի մասնաւորի դպրոցի մանուկներուն, մեր Ս. Կրօնից օրհնութիւնները. եւ թէ՛ ի՛նչպէս հաւատոյ ու Քրիստոնէութեան բարձր գաղափարները Ձեզ առաջնորդ ընտրած եք կառավարելու համար այս քաղաքը:

«Ու միջ կ'ըլլին իմ ամենապատեհ շնորհակալութիւններս կր մատուցանեմ, կր փափաքիմ որ մօտակայ օրերուն մէջ, Վիեննա քաղաքը գրէ իր պատմութեան ամենադիպացիկ էջերէն մին. եւ այս հաւատքի ու ցնծութեան օրերն ալ անցնելի տալուորուն մեր յիշողութեան մէջ:»

Հոս Կարդինալ Վան Ռոսսոմ Քահանայապետական օրհնութիւնը տալով . Կարդինալ Նալլի հետ միասին կ'երթայ կը կենայ խիստ ճոխ ամպովանիւ մը ներքեւ, ու թափոր մը կազմուելով ամէն կարգի կրօնաւորներէ և անթիւ ժողովուրդէ մը, կ'սկսին յառաջանալ Քէրնիս-Նէրչիթրասի ճամբով դէպի Ս. Ստեփանոս Մայր Եկեղեցին, օրհնելով երկուստեք ծնրադրող բազմութիւնը տեղւոյն երկայնքը:

Մայր Եկեղեցին ճոխօրէն զարդարուած ու փառաւորապէս լուսազարդուած էր: Հոն հասնելուն Կարդինալին ընդ առաջ ելաւ Կոնոնիկոսներու ամբողջ դասը. իսկ Եկեղեցւոյն մէջ վաշտ մը հետեւակազօր մէկ սպայէ՛ մը հրամատարութեամբ զինուորական պատիւներ կ'ընծայէր:

Կարճ աղօթքէ մը ետքը, Վսեմաշուք Կարդինալները Եկեղեցւոյ դրան առջիւ երթալով իրարմէ հրաժեշտ առին, մինչ Ն. Վ. Առաքելական Պատուիրակը իրեն յատկացուած հանդիսական կառքը ելնելով, հետեւորդներուն հետ միասին ուղղուեցան դէպի Կայսերական Պալատ՝ ուր պատրաստուած էին իր բնակութեան արկար 3 ժինները:


Կայսերական ունկնդրութիւնը

Փրանկիակոս Յովսէփ Կայսրը՝ որ քաջառողջ վիճակ մ'ունի, առաւ կանուխ Վիեննա հասած էր Շէօնպրունի ղղեակէն, Քահանայապետին Կարդինալ-Պատուիրակն ընդունելու համար։ Կէս օրէն ետք ժամը 5.30ին առանձնական ունկնդրութեան ընդունեց զանի, որ պահուն Կարդինալը Քահանայապետին մէկ ինքնագիր նամակը յանձնեց Կայսեր։

Սոսակցութիւնը շատ մտերմական եղաւ ու տեսեց կէս ժամէ աւելի։ Կայսրը ուղեց մանրամասնօրէն տեղեկութիւն ստանալ Ս. Հօր առողջութեան մասին. և իր գահունակութիւնն յայտնելով, յանձնարարեց Կարդինալին որ հաճի պարզել Ս. Քահանայապետին իր որդիական մեծարանայ ու սիրոյ զգացումները։ Ու Կարդինալին տուաւ Ս. Ստեփանոսի Մեծ Խաչը։

Ունկնդրութենէն ետքը, Վեհապետը Շէօնպրուն վերադարձաւ. Յաջորդ օր Վիեննա գալու և նախագահելու համար Ս. Հաղորդութեան Համաժողովոյ մեծ նիստին։

(Շարունակելի)




Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ռ Վ Ս

Սպանիոյ թագաւոր Ալֆոնսոս ԺԶ ի քայրն Պուրպոնեան ինֆանթա Մարիա-Թերէզա ամուսն շնին յանկարծական մահուամբ վախճանած ըլլալով, այս րօթաբեր լուրը թագաւորն ինքն իսկ հեռագրեց առ Ս. Քահանայապետն, և անմիջապէս հեռագրով պատասխանեց ցաւակցական ու մխթարական խօսքերով։

* Լաւաւնոցի Կարդ. Գուլիէի կտակը Այս կտակը կը կրէ 13 Ապրիլ 1902 թուականը, և հիմա իր մահունէն ետքը հրատարակուեցաւ։ Ասոր մէջ նա շնորհակալութիւն կը յայտնէ իր ուսուցիչներուն և Բարիդու թեմին որ այնչափ սիրով ընդունեցաւ և անոյց ղինքն կղերանոցին մէջ։ Օրդենի և Լիոնի քահանաներէ և հաւատացեալներէ ներումն կը խնդրէ իր զանցառութիւններուն համար ու կը յարէ. «Աստուած վկայ է ինձ որ զիրենք շատ սիրած եմ»։ Կտակատար կը կարգէ իր օգնականն Արհի. Տէշէթ. «Իմ բարի ազգականներ, կ'ըսէ, իմ հօրեղբորդիքս գիտեն թէ ես աղքատ մտայ քահանայութեան մէջ։ Պիտի չզարմանան եթէ աղքատ մեռնիմ»։ Ամենուն շնորհակալութիւն յայտնելէ վերջը կ'ըսէ. «Նրա փառագիծ հանգչիլ Լիոնի նախագահական եկեղեցւոյն մէջ։ Պարզ քար մը պիտի գոցէ դարձան, վրան գրուած ըլլալով մի յն անունս, մահուանս թուականը և «Հանգիցի ի խաղաղութեան»։ Ո՛չ մի ծաղիկ, ո՛չ մի պսակ դադաղիս և գերեզմանիս վրայ։ Ինչու չեմ ուզեր ճառասանցութիւն մը յաւարկաւորութեանս օրը։ Ազօթք կ'ուզեմ, մանաւանդ ազօթք»։



ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԱՐՔԱՐԱՆ

Տիգրանակերտի մեր Հայ-Կաթողիկէ հասարակութեան երեսելիներէն Վսեմաշաք Հաննա էֆ. Գաղաթեանի խուժուժ ապանութեան մասին նոր տեղեկութիւններ ստացանք նոյն քաղաքէն, զորս կ'ուզենք անյոպաղ հաղորդել մեր ընթերցողներուն, գիտնալով հանդերձ որ իրենք ալ մեծի պէս կարեւոր խոցուած ի սուգ պիտի համակին անմխթար։

Այս տրամագգեաց օրը, կ'ըսէ տեղեկաբերը, սեւ խաւար մը տարածուած էր ո՛չ միայն մեր հասարակութեան այլ ըլլոր Բրիտանիէից վրայ և գոմենքը նշուակ ըրած առ հասարակ ծանրաթախիծ արհաւիրքներու։

«Սեպտեմբեր իննին (Ը. Ե.) իրիկունը, դեռ ժամը մէկուկէս (Ը. Թ.) չեղած, հանգուցեալը միայնակ տնէն կ'ելլէ Գաղաթեան Սմէէ էֆ.ին տունը երթալու։ Հազիւ քիչ մը կը յաւաքանայ և ահա յանկարծ հրագէն մը ինն անգամ կ'որոտայ ետեւէ ետեւ ահա»

գին թնդուհով և «Հալիւր, հալիւր» (Պարնուեցա՛յ) աղաղակ մը կը գոռայ մահամերձ վերաւորեալի մը աղեկտուր շեշտերով: Սկիզբը՝ այս ամէնը արեւոյններու գործ կարծուելով, մարդ տեղէն չշարժիր: Բայց մէկէն ի մէկ բոլոր քաղաքը կը դղրդի, ե՛րբ կը լսուի թէ «Գազազիւն Հանկու հփհիսին զարնուեցաւ»: Ամէն կողմէ կ'սկսին խափել աղետին վայրը, քաղաքական, զինուորական ամէն կարգի պաշտօնեաներ, մեծամեծներ: Վերաւորեալը կը տարուի Գազազեան Ամէն էֆ-ի տունը: Վէրքերը կը քննուին, կը հասկցուի որ մահը մօտ է: Ինը տեղէ վերաւորուած էր: Մէկ ժամ հաղիւ կ'անցնի, իր մահկանացուն կը կնքէ Վսեմ. ողբացեալը, սիւնը Գազազեան գերդաստանին, անգուգական գրողէտը, քրիստոնէից անվեհեր փաստաբանը, արդարութեան արի ախոյեանը, եկեղեցւոյ հզօր պաշտպանը, բանաստեղծը, հետորը, իմաստասէրը: Կը մարի Տիգրանակելտի ամենէն փայլուն հանճարը, ու սեւ սգով կը համակէ զամենքը, իր գերդաստանը, Եկեղեցին, իր քաղաքակիցները:

Անտուած շատ անգամ դառնութեան հետ քաղցրութիւն մըն ալ կը խառնէ. բիւր շնորհակալութիւն որ մեզի մտառուական այս լեզի բաժակին հետ խառնէր է անուշութիւն մըն ալ: Որովհետեւ, թէեւ մեռաւ այդ մեծ անձնաւորութիւնը, բայց մեռաւ քաջ քրիստոնէի պէս, ինչպէս ապրեցաւ համոզեալ հաւատացեալի նման: Զարնուելուն պէս աղաղակած է. «Աստուած իմ, քիչի կը յանձնեմ իմ հոգիս. Յիսուս, Մարիամ, Ս. Հայր Յովսէփ, սիրոս ու հոգիս Ձեզի կոչաս»: Եւ ապա մինչեւ վերջին շունչը իր բերնէն ուրիշ բան չստեցաւ եթէ ոչ սա խօսքերը. «Աստուած իմ, բոլոր արտանց կը զղջամ մեզ-քերուս վրայ, ներէ՛ ինձի... Վարդապետ, արձակում տու՛ր, Հաղորդութիւն, վերջին Օծում... մեղաւոր եմ, թողութիւն տուէ՛ք ինձի» ևն. ևն.: Կը հարցնէին իրեն այլեւայլ բաներ. բայց ինք միայն միեւնոյն խօսքերը կը կրկնէր՝ այնքան ազմուկներու մէջ, ոչնչ քան բազմութեան առջեւ, մահուան ատենն իսկ փառք հանգիստնալով իր կրօնքին, որուն անվեհեր ջատագով եղած էր իր կենդանութեան ժամանակ: Անտուած յաւիտենական հանգիստ պարգեւէ իր հոգւոյն որ վերջին Ս. Խորհուրդներով զօրացած մեկնեցաւ աշխարհէ: Թէեւ ողբացեալին սպանողը օրիկայ միւն է, սակայն կառավարութեան զայն դատելու մէջ ցոյց տուած մոլեռանդութենէն, և ուրիշ նախընթաց և հետեւորդ շատ մը պարագաներէ ակներեւ կը տեսնուի թէ նա զո՛հ գացած է ստոր, գեհննային հաշիւներու անկեալ կուսակցականներու որոնք չեն կրնար տանիլ որ ապրի գրչի տէր, երեսփոխանահան թեկնածութեան արժանի, իրենց ստորնութիւնները խայտառակօր քրիստոնէայ մը: Երկու քրիստոնէայ կար քաղքիս մէջ պետական պաշտօններու ընդունակ, հանգուցեալը և անոր հօրեղբորդին Յովհաննէս Էֆէնտին. երկուքն ալ այս տարի ետեւէ ետեւ կուրուսինք, աւա՛ղ:»

— Յիբուսի արտասուելով կ'արձանագրենք այս աւաղելի մանրամասնութիւնները, մենք ալ անով միայն մխիթարուելով որ այդ երջանկայիշատակ նահատակը, զո՛հ իր առաքինութիւններուն և բարեմասնութեանցը, հիանալի և անմասնալի օրինակ մը ձգած է ճշմարիտ քրիստոնէի, ճշմարիտ Կաթողիկէի նախանձելի մահուան, սա դժպիսի ժամանակներուս մէջ, մինչ յաւիտենականութիւնը մոռցուած, բեկանաւտ և խուսափուկ թշուառ կեանքիս ունայնութեանց հետ միայն կը զբաղուի, անհատուած կիրքերով և ամբարտաւանութեամբ: Յիշատակ մնայ այս գերագանց մահը՝ ամէն հաւատացեալի համար:

Սգազգած Գազազեան մեծ գերդաստանին և ազգատոհմին գլուխկցութիւններով հանգերձ կը մաղթենք Հոգւոյն Սրբոյ երկնապարգեւ մխիթարութիւնները:

* Անցեալ Շաբաթի օր Վիեննայէն Կ. Պոլիս հասաւ Արհի. Գրեգոր Արք. Գալիկեան: Արքահայր Մխիթարեանց Վիեննայ. հետն էր նաև Հ. Գրեգորիս Ծ. Վ. Գալիէքստրեան: Ամենապ. Հոգեւոր Տիրոջ կողմանէ բարի գալուստ մաղթելու համար կայարան գնաց Գեր. Յ. Վ. Սարախանեան: — Նոյն օրը Արհի. Արքահայրը այցելութեան եկաւ Ամենապ. Հոգեւոր Տիրոջ, որ իրիկուն գէմ վերադարձուց այցելութիւնը իւր Արհի. Փախանորդին հետ ի միասին:

* Խաբբութի վիճակաւոր Արհի. Ստեփան Ծպօ. Խարալէեան անցեալ օր այցելութիւն տուաւ Ներքին գործոց Նախարար Տանիշ և Խարբութի նոր կուսակալ ձէմալ պէյերու, և երկուքն ալ կողմանէ սիրալի ընդունելութեան և մեծարանաց արժանացաւ:

* Ծովային նախարար Մահմուտ Մախթար փաշա՝ օրդի Ստարագամ փաշայի, անցեալ ուրբաթ օր այցելութիւն եկաւ Ամենապ. և Դեյ երջ. Հոգեւոր Տեսուչի. Գաւն փայրկեանի չափ սիրալի խօսակցութիւն տեղի ունեցաւ, և պատշաճ մեծարանքներն ընդունելէ վերջը մեկնեցաւ:

* * Դերյ. Մարտիրոս ԻՐ. Վ. Մկրեան, որ տարիներէ ի վեր Հայ Կաթողիկէից Ժողովրդապետն է ի Նիւ Եօք, Ն. Վ. Կարգ. Ֆարէյի գեղարուեստական կերպով շինուած եւ լեկտրական լամպար մը ընծայեր է, որմէն շատ գոհ մնալով Ն. Վանուածիւնը շնորհակալութեան թուղթ մը ղրկած է իրեն։

* * Զմմառու կղերանցի աշակերտներէն Մանկասարեան և Հատատեան պատանիներն Հռոմ ղրկուեցան՝ Բօքսականտայի դպրոցը, իրենց բարձրագոյն ուսմունքն աւարտելու և համալսարանի տասնամեակներ առնելու համար։

* * Հանճա էժ. Գալագեանի սպաննութեան շուրջ. — Սալյան կ'իմոնայ թէ նկատելով որ Տիգրանակերտի մէջ խժոժօրէն սպաննուող Հանճա էժ.ի ոճրագործներուն ցարդ անձանօթ մնալը երկրին տեղորոշութեան տեսակետով լաւ տպաւորութիւն չի թողուր, Ներքին գործոց նախարարութիւնը հեռագրական խիստ հրահագներ տուաւ որպէս զի Հանճա էժ.ի սպանիչներուն քննութիւնը փութացուի և հեղինակները անպայման երեւան հանուին։

~*~*~*~

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Լեյվիաճմի կաթողիկոսը մտանոց. Էջմիածնէն հայրապետական Դիւանապետ՝ Բուզարատ վրդ.ի ստորագրութեամբ Պատրիարքարան հասած հեռագիր մը կը հաղորդէ թէ կաթողիկոսը մեծ մտահոգութեան մէջ է և անհամբեր կը սպասէ Հայաստանի դրութեան մասին Պատրիարքարանի խոստացած մանրամասն տեղեկագրին, զոր դեռ չէ ստացած։

Պատրիարքարանէն հեռագրուեցաւ թէ՛ այդ տեղեկագիրը արդէն թղթատարին յանձնուած է։

* * Պատական նախարարը այցելութիւն տուաւ հրաժարեալ Արշարունի Պատրիարքին բնակարանը և հաւատալքներ տալով՝ որ կառավարութիւնը Հայաստանի տպահովութեան համար արդէն ձեռնարկած է արմատական միջոցներու, խնդրեց որ ետ առնէ իր հրաժարականը։

Պատրիարքը պատասխանեց որ խնդիրը այժմ ազգին ձայնը ներկայացնող Ազգային Ժողովին առջև է, ան է որ փառհաւթիւն պէտք է ստանայ կառավարութեան ձեռք առած միջոցներու իրագործման մասին, իսկ հակառակ պարագային ան պիտի ընդունի իր հրաժարականը և այն ատեն ինքը կառավարութեան ալ պիտի ներկայացնէ զայն։

~*~*~*~

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Կ. Պոլսոյ արուարձաններուն մէջ բոլոր կառապաններն, սոյլապաններ և փոխադրական անանոց տէրերը հսկայ գործադուլ մը հրատարակեցին՝ կառավարական սուրբերու հուաբուած գումարը միանգամէն պահանջուելուն համար իբր ցոյց։ Այս գործադուլը մեծամեծ համեմատութիւններ առաւ, յառաջ բերելով չարաչար դժուարութիւններ, փաճառականաց, շինուածներու մինչև իսկ ննջեցեալներու փոխադրութեան համար։ Նոյնիսկ նախարարներ ու դեպուաններ ստիպուեցան հետիտն երթալ Սուլթանին ծննդեան օրն վերջ տրուեցաւ գործադուլին։

* * Քիւրս աւագանները կը ճեշապնուլին, Միր Մհէի եւ Սայիսի խումբը ձեռքաւորուած. — Երէկ Ներքին գործերու նախարարութեան հասած հեռագրէ մը կը տեղեկացուի թէ օսմ. զինուորները Վանայ Կովոյզ գաւառակին մէջ բուռն ընդհարումներ ունեցած են Միր Մհէի և Սայիսի հրոսակումբերուն հետ։ Այս առթիւ աւագաններէն երկու հոգի սպաննուած և աւագակախումբի միւս չարագործներն ալ ձեռքաւորուած են։ Այս առթիւ կը տեղեկացնեն նաև թէ զինուորական հետապնդումները ամենախիստ կերպով առաջ կը տարուին։

* * Թիւրք սպաներ եւ կառավարութիւնը. — Պաշէն կը հեռագրեն Նայի Ֆրայի Փրիսին թէ հոս յամառօրէն լուրեր կը շրջին որ շարժում մը ծայր տուած է զօրքերուն մէջ ներկայ դահլիճին գէմ։ Միւս կողմէ կ'ըսուի թէ՛ դահլիճի ծոցին մէջ իսկ գժգոհութիւն կը տիրէ ծանիշ պէյի գէմ, որ իր պաշտօնին մարդը չի նկատուիր։

* * Արշանիոյ մէջ Մալիսները կը շարունակեն դեռ իրենց ապստամբութեան մէջ։

* * Նախարարաց խորհուրդն, Ասանայի 100,000 ոսկիին զանգուր յետաձգուած. — Նախարարաց խորհուրդը իր անցեալ առուր նիստին մէջ հետեւեալ որոշումները տուաւ և խորհրդակցութիւնները կատարեց. — 1) Ատանայի փաճառականներուն ու երկրագործներուն փոխ տրուած գումարին գանձումը յետաձգել որոշեց։ 2) Խորհրդակցեցաւ Սամսոյ կացուածութեան վրայ, ինչպէս նաև կայս. թոշակին և կայս. ընտանեաց յատուկ թոշակներուն և օտար պաշտօնատարներու ամսաթոշակներու պատերազմական տուրքի ենթակայ ըլլալուն։

կամ չըլլայուն վրայ, 3) Մարիտորներու խնդիրը կարգադրելու համար Շքոտար ղրկուելիք պետական Յանձնախումբին յատուկ հրահանգները քննութեան ենթարկել:

* Այ-իսլամ իսափներու աւակներու թիւը զինուորութեան գերծ. — Կրթական նախարարութիւնը կը տեղեկացնէ որ եօթնամեայ իտալիներու վերջին երկու կարգերուն մէջ գտնուող զինուորացու աշակերտներուն զինուորագրութիւնը յետաձգուելուն մասին արուած պաշտօնական որոշումը կը վերաբերի նաև ոչ-իսլամ եօթնամեայ իտալիներու:

* Ստամբուլ մէջ սպասարարութիւնը դեռ կը շարունակէ: Գաղղիացի և անգղիացի զինուորական ուժերու — որոնք կղզին ելան, — հրամանատարները ամէն միշտ անոք կ'առնուն սահմանափակելու համար խռովութիւնները: Մինչև հիմա թուրք զօրքերէն և ապրտամբներէն բաւական կորուսաններ պատահեցան:

* Պուլկարիոյ և Սերպիոյ տրամադրութիւնները դէպի պատերազմ յառաջ կ'երթան: Զօրահանութիւն կը կատարուի և ժամէ ի ժամ կը վախճուի պատերազմի հրատարակութեան, թէև մեծ պետութիւնք կարելի եղած քանքնի գործը զինն խաղաղութիւնը պահպանելու, պայմանաւ սակայն որ թուրք կառավարութիւնը անհրաժեշտօրէն իրագործէ նաև միւս բոլոր քրիստոնէայ աղգերու համար այն ամէն բարեկարգութիւնները զորս ստիպուեցաւ վերջերս շնորհել պաշտնացոյց թուրք կառավարութիւնն այլ բնդհանուր զօրակոչ հրատարակեց:

* Անգղիական, ռուսական, ֆրանսական, աւստրիական, գերմանական և սև լեռան զեպանները անցած օր Արտաքին գործերու նախարարին այցելելով տեսակցութիւններ ունեցան քաղաքական ներկայ կենսական խնդիրներու շուրջ:

* Կոմս Պերխորսի մօտ ճառը՝ կացութեան մասին — Տէրակախօնի մէջ արտաքին գործերու նախարարութեան պիւտճէին վիճարանութեան ատեն կոմս Պերխորս, պատասխանելով զանազան ատենախօսներուն, նոր ճառ մը արտասանեց. որուն մէջ կրկնեց թէ իր առաջարկին նպատակն էր գլխաւորաբար գործակցել միւս տերութեանց հետ Պալլադաններու անդորրութիւնը և արարութուն պահպանելու համար: Այս նախաձեռնութիւնը ատենանելով նախարարը երբեք չէր խորհած անոք անցնել Արևելեան գործերու ղեկը, այլ բոլոր մեծ տերութեանց հնարաւորութիւնն ունի փոխադարձ շփումով մը յայտնել իրենց կարծիքները այն միջոցներուն համար որոնցով կարելի պիտի ըլլայ հետապնդուած նպատակին հասնել:

* Թան լրագիրը ի մէջ այլոց կը գրէր հետեւեալները.

«Կ. Պոլսոյ կառավարութիւնը քաջկարգաւորեց գործադրութեանց մէջ կուսակալութեանց ընդհանուր ժողովներուն (մեծիսխալմուտի) դերը ընկողնող և քաւկարգաւորեցներու գործադրութիւնը միայն կուսակալներուն կը յանձնէ: Կեդրոնական կառավարութեան քաւի մտադրութիւնները կուսակալներու կողմէ կրնան այլապէս մեկնուիլ և ըստ այնմ գործադրուիլ, եթէ բխտոնեաներու կողմէ ընտրուած նահանգալիկ ժողովներու նախալիւնը քաւի չըլլայ: Երեսուստի Թուրք ազգայնականութիւնը, որովք սահմանադրութեան գործադրութիւնն իսկ անդաւալածեցին, քաւական գօտաւոր են՝ մանաւանդ երեսուստական ընտրութիւններու նախօրեակին, վարչական այս վերակազմութեան գործադրութեան գործունեութիւնը անդաւալածելու և նոյնիսկ վախճելու կառավարութիւն մը, ուր գործի մարդիկ կը պալիսին: Պէտք չէ կարծել որ Բ. Դուռը ինքնաբերաբար Մակեդոնիոյ բխտոնեայ ազգութիւններուն այս մեծաշնորհները կուսայ: Այսպէսական ապստամբութիւնը, Պաղատեան ազգութիւններու միացումը, տրուութեանց ազգաբնակչութիւնները, Պերխորսի առաջարկը և վերջապիս քաւիկարգութեանց մագպարացիներ հրատարակուելու համար Թուս դիւպակին դիմումը մինչև որ չհաստատուեցաւ, Բ. Դուռը տակն չշարժեցաւ: Մ. Սաստօֆի ազգեցութիւնը կ'երեւի քի վճռական եղաւ Օսմ. Իսթիքիին վրայ, որ մինչև հիմա անհրաժեշտ եղած ասեմ չկրցաւ որոշում մը տալ և անկարող գտնուեցաւ: Բ. Դուռն անշարժութիւնը Պուլկարեանի ժողովուրդներու յարաձուր՝ քաւկարգութիւնը կ'արգարացնէ: . . . Մեծ տրուութիւններ իրենց կարգին պիտի հսկեն որ ծանուցուած են իմիսը գործադրուի: Տրուութիւնները Թուրքիան պիտի խալարեն, որովհետև քի Օսմ. կառավարութեան տուած որոշումները մեծաւ ծառ մնան, այն ասեմ պիտի ստացուին միջանկիւր:»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Օրմանեանի «Հայոց եկեղեցի» զիրք	545
Ֆրանմասունք վի Թիւրքիա իւրիւր	551
Վիեննայի Ս. Հաղորդութեան Համագային Համաժողովը	554
Տեղեկագրականք	557

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՅՈՎԼ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱԴՅՏ

ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱԵԱՆ



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԴԱՆԴ» . Հայ Կաթողիկէ Ի Պատրիարքարան
պատշտօնական Շաբաթաբերրք, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը
սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ
հոյս բովանդակութեամբ. ունենալով հաշիւ տեղեկութեանց բաժին
մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյոգ ամեն լուրերն՝ համառօ-
տած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ բնօրէնողներին անոնց
մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբեր կարդալու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դիեկ . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արաստահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Բոսնով եւ
կամ մէյ մէկ դր.նոց համակապրումով:

Մէկ թիւ 1 Դահլեկան



Նամա . յօդուած, եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԴԱՆԴ

Բերա, Պայրամ փողոց Թիւ 5

Կ. Պոլիս

Katoghiché Arzakank

5 Rue Baïram 5

Péra

Constantinople

- ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանց կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնս պատշաւորեալ չէ անպատեհառ կամ նոյնութեամբ
հրատարակել իրեն դրկուած ա եւ է յօդուած:
3.— Ձեռագիրներ ետ չեն գարձուիր:
4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուրքիւն մէկ
կողմը միայն:
5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: